ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19 մարտի 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ԳԱԱ ակադեմիկոս, ՀՌՀ հիմնադիր ռեկտոր, ականավոր գիտնական, հայ-ռուսական գրականական և մշակութային կապերի մեծանուն գործիչ Լևոն Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հայ-Ռուսական համալսարանի շենքին փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լևոն Մկրտչի Մկրտչյանը ծնվել է 1933 թվականի մարտի 2-ին, Ախալցխա քաղաքում:

Լևոն Մկրտչյանը 1965 թվականից ԽՍՀՄ գրողների միության անդամ էր, 1971 թվականին ստացել էր բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1973 թվականին արժանացել էր պորֆեսորի կոչման:

1974-2000թթ. եղել է Երևանի պետական համալսարանի ռուսական լեզվաբանության ու թարգմանության տեսության, ռուս գրականության ամբիոնի վարիչը:

Ականավոր գիտնական, հայ-ռուսական գրականական և մշակութային կապերի մեծանուն գործիչ Լևոն Մկրտչյանը 1981 թվականին արժանացել է ՀԽՍՀ Գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման, իսկ 1983 թվականին արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի:

1996 թվականի Լ. Մկրտչյանը ընտրվել է ԳԱԱ ակադեմիկոս:

1975-1979թթ. եղել է Հայաստանի Գրողների միության վարչության քարտուղար:

1998 թվականի ականավոր գիտնական Լ.Մկրտչյանի ջանքերի շնորհիվ Հայաստանում հիմնադրվել է Հայ-Ռուսական /Սլավոնական/ համալսարանը, որի հիմնադիրն ու առաջին ռեկտորը ակադեմիկոս Լ.Մկրտչյանն էր:

Լևոն Մկրտչյանը մահացել է 2001 թվականի օգոստոսի 22-ին:

Հաշվի առնելով ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Մկրտչյանի մեծ ներդրումը հայ-ռուսական գրականական և մշակութային գործում և Հայ-Ռուսական /Սլավոնական/ համալսարանի ռեկտոր, տ.գ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա.Դարբինյանի միջնորդությունը՝ Լևոն Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հայ-Ռուսական համալսարանի շենքին փակցնելու վերաբերյալ, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Լևոն Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը:

Լևոն Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հայ-Ռուսական համալսարանի շենքին փակցնելու վերաբերյալ հարցը քննարկվել է Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լևոն Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լևոն Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ